Հավելված 2
2025 թ. «16» հունվարին
կնքված N ԴՏՊ-1141-11018/25 ԱՐՄ պայմանագրի

# Դրամաշնորհային հաշվետվություն N_1_

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում Արմավիրում» |
| **Դրամաշնորհի N** | ԴՏՊ-1141-11018/25 ԱՐՄ |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ ԱՍՀՆ |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | 01.01.2025-31.12.2025 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.01.2025-31.03.2025 |
| **Ներկայացման օր** | 09.04.2025 |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Անահիտ Նահապետյան,<br>Ցերեկային կենտրոնի տնօրեն |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Ծրագրի հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները.

- **Միասնական սոցիալական ծառայությունների Արմավիրի տարածքային կենտրոնի հետ համագործակցություն.** Ծրագրի հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է համագործակցությունը ՄՍԾ տարածքային կենտրոնի հետ, եղել են վերջինիս կողմից ուղղորդումներ, որոնք ընդգրկվել են կենտրոնի կողմից մատուցվող ծառայություններում:

- **Շահառուների կարիքների և կարողությունների գնահատում**. Հաշվետու ժամանակահատվածում գնահատվել են թվով 131 շահառուների կարիքներն ու կարողությունները, որոնցից 129-ը ընդգրկվել են մատուցվող ծառայություններում: Ընդգրկվել են մարզի քաղաքային և գյուղական համայնքների երեխաներ, որոնք ընտրվել են ըստ տարբեր չափանիշների՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, սոցիալապես անապահով, հաշմանդամություն ունեցող, Արցախից տեղահանված ընտանքիների երեխաներ, խոցելիության այլ չափանիշներ: Արդյունքում առկա է հստակ նկարագիր յուրաքանչյուր շահառուի կարիքների և կարողությունների վերաբերյալ:

- **Անհատական զարգացման պլանի մշակում**. Գնահատման արդյունքում բազմամասնագիտական թիմի կողմից մշակվել են բոլոր գնահատված շահառուների անհատական զարգացման սոցիալ-հոգեբանական պլանները: Արդյունքում յուրաքանչյուր շահառուի համար ունենք հստակ պլան, որի հիման վրա իրականացվել են անհրաժեշտ պարապմունքներն ու ծառայությունները:

- **Ծառայությունների, պարապմունքների ու խմբակների նախանշում**. Շահառուների համար հաշվետու ժամանակահատվածում մշակվել է ծառայությունների ու պարապմունքների ժամանակացույց: Կենտրոնում գործում են արտ թերապիայի և նկարչության խմբակները, որտեղ ներառված են 10-15 երեխաներ:

- **Շահառուների ծնողների հետ համաձայնագրերի կնքում**. Բոլոր շահառուների ծնողների հետ կնքվել են համաձայնագրեր՝ անվճար ծառայությունների մատուցման մասին: Շահառուների ծնողները տեղեկացվել են աշխատանքային ժամանակացույցի մասին: Արդյունքում ունենք իրավական կարգավորում ծառայություն մատուցողի և ծառայություն ստացողի միջև:

- **Սոցիալական աշխատանք շուրջօրյա խնամքի հաստատություններում գտնվող երեխաների՝ ընտանիքի հետ վերամիավորման ուղղությամբ**. Հաշվետու ժամանակահատվածում ստացել ենք շուրջօրյա հաստատությունների ցանկը, որոնց հետ նախատեսվում է աշխատել այս տարի՝ երեխաների ընտանիքների հետ վերամիավորման նպատակով: Իրականացվել են բանավոր հարցումներ, հեռախոսազանգեր բոլոր 4 հաստատությունների հետ: Որոշների հետ ձեռք է բերվել համաձայնություն հանդիպել և քննարկել, մեկի կողմից նշվել է, որ իրենց հաստատությունում չկան համապատասխան երեխաներ վերամիավորման նպատակով, մյուսի կողմից նշվել է, որ հնարավոր դեպքերը կներկայացնի: Աշխատանքները կշարունակվեն այս ուղղությամբ:

- **Ամենօրյա պարապմունքների, խմբակների ու ծառայությունների մատուցում**. Ըստ հաստատված ժամանակացույցի և անհատական զարգացման պլանների՝ շահառուներին հաշվետու ժամանակահատվածում մատուցվել են անհատական և խմբային անհրաժեշտ սոցիալական ծառայություններ: Ծառայություն է ստացել հունվարին՝ 107, փետրվարին՝ 119, մարտին՝ 127 երեխա, որոնցից 30-ը հաշմանդամություն ունեցող, իսկ 7-ը՝ Արցախից տեղահանված ընտանիքների երեխաներ են: Կենտրոնում գործում են արտ թերապիայի և նկարչության խմբակները: Այստեղ շահառուները պատրաստում են բացիկներ, տարբեր մեթոդներով ստեղծում են դիզայնի տարբեր ատրիբուտներ, զարդարանքներ, կախազարդեր, կատարում են արտ թերապևտիկ աշխատանքներ, ավազաթերապիա:

  Երեխաների հետ տարվել են տարբեր աշխատանքներ: Մասնավորապես, խմբային աշխատանքներից մեկում երեխաները սովորել են ճանաչել տարվա եղանակները, դրանց փոփոխությունները, բնորոշ առանձնահատկությունները, ինչն օգնում է նրանց ավելի լավ հասկանալ շրջակա աշխարհը: Տարվա եղանակների հետ կապված փաստերը, պատկերները և գործողությունները խթանում են երեխայի կենտրոնանալու, հիշելու և վերլուծելու ունակությունները, իսկ աշխատանքի ընթացքում օգտագործվող երաժշտությունը, արվեստի գործիքները օգնում են ավելի ակտիվացնել երեխաների զգայարանները՝ գործընթացը դարձնելով հաճելի և ներգրավող:

  Երեխաների հետ տարվող մեկ այլ աշխատանքն ուղղված էր բանավոր խոսքի զարգացմանը, նպատակ ունենալով ձևավորել և կառուցել ճիշտ նախադասություն՝ պահպանելով շարահյուսական և քերականական նորմերը: Այս աշխատանքը նպաստում էր պասիվ բառապաշարի հարստացմանը, ինչպես նաև, ստեղծագործական մտքի զարգացմանը, մտածողություն ձևավորելուն: Աշխատանքի ավարտին երեխաները սկսեցին հստակ տարբերակել նախադասությունը բառակապակցությունից:

Իրականացվել են ֆիզիկական ակտիվությանն ուղղված խմբային աշխատանքներ: Այդ պարապմունքներն ուղղված էին առողջ ապրելակերպին, մասնագետները խոսել են երեխաների հետ հիգիենայի կանոնների մասին և դիտել թեմային համապատասխան մուլտֆիլմ:
Բացի այդ իրականացվել են նաև կենցաղավարմանն ուղղված խոհարարական աշխատանքներ: Խոհանոցային աշխատանքը կարող է դառնալ ոչ միայն զվարճալի, այլև շատ օգտակար, ինչպես նաև զարգացնել մի շարք հմտություններ՝ մանր մոտորիկա և կոորդինացիա, պատասխանատվություն, վստահություն իր ուժերի նկատմամբ, զգուշություն, ստեղծագործական միտք, երևակայություն, ինչպես նաև սովորեցնել ճիշտ ինքնասպասարկման հմտություններ:

Մարտի 8-ի տոնի առթիվ երեխաները մասնագետների օգնությամբ պատրաստել են գեղեցիկ և ինքնատիպ բացիկներ՝ նվիրելով իրենց մայրիկներին, տատիկներին ու քույրիկներին: Աշխատանքը նպաստեց երեխաների համագործակցությանն ու գեղագիտական ճաշակի ձևավորմանը:

Երեխաների իրավունքների իրազեկման շրջանակներում իրականացվել են 2 տարբեր աշխատանքներ տարբեր խմբերում: Նրանցից մեկում երեխաների հետ քննարկեցինք, թե ինչու է մաքուր միջավայրում ապրելու իրավունքը կարևոր, և ինչպես կարող ենք պաշտպանել այն: Երեխաները կիսվեցին իրենց փորձով՝ պատմելով, թե որտեղ են հանդիպել աղտոտված միջավայրի օրինակների, սակայն չեն պատկերացրել, ինչպես կարելի է նպաստել միջավայրի մաքրությանը: Այնուհետև, խաղերի և ստեղծագործական աշխատանքների միջոցով երեխաները ոչ միայն պատկերացրին մաքուր միջավայրի կարևորությունը, այլև սովորեցին, որ բնությունը պահպանելը յուրաքանչյուրի պարտականությունն է: Նրանք մեծ ոգևորությամբ առաջարկեցին տարբեր լուծումներ: Պարապմունքի վերջում երեխաները եկան ընդհանուր եզրակացության, որ մենք բոլորս միասին կարող ենք ստեղծել ավելի մաքուր ու առողջ աշխարհ, եթե հոգ տանենք շրջակա միջավայրի մասին: Նրանք խոստացան, որ իրենց առօրյայում կկատարեն փոքր քայլեր՝ չաղտոտելով բնությունը:

Մյուս պարապմունքի շրջանակներում երեխաները պատրաստեցին իրենց իրավունքների քաղաքը, նրանք ստեղծեցին հստակ ու սիրով լցված աշխարհ, որտեղ յուրաքանչյուր գիծ ու գույն արտահայտում էր հավասարության ու արդարության զգացողությունը:

Ամենօրյա ծառայությունների մատուցման շրջանակներում կենտրոն հաճախող բոլոր երեխաներին տրամադրվում է անհրաժեշտ սնունդ, որն իրականացվում է՝ գնելով արդեն պատրաստի փոքրիկ սննդի ընդմիջում:

Հաշվետու ժամանակահատվածում մատուցվել է նաև անձնական օգնականի

ծառայությունը թվով 3 երեխաների, որոնց մատուցվել է ուղեկցման ծառայություն: Այս երեխաները կենտրոն են գալիս հարակից գյուղական համայնքից, ծնողներն աշխատում են և չեն կարող երեխաներին բերել կենտրոն, իսկ երեխաներն ունեն խնդիրներ, չեն կարող կենտրոնի մեքենայով մենակ գալ կենտրոն: Ուստի իրականացվել է ուղեկցման ծառայություն անձնական օգնականի կողմից, որի պարտականությունները դրված են կենտրոնի սոցիալական աշխատողի վրա:

- **Ծնողական դասընթացների կազմակերպում.** Ծնողների հետ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 3 խմբային քննարկում սեմինար, որին մասնակցել է 36 ծնող: Առաջին ամսվում ծնողների հետ քննարկվեց հաճախ հանդիպող միջավայրային դժվարությունները, որոնք կապված են երեխաների խնդիրների հետ: Խոսվեց մանկապարտեզներում և դպրոցներում կամ հանրային այլ վայրերում նմանատիպ իրավիճակների դեպքում ինչպես հաղթահարել և չհուսահատվել, ընդհակառակը, սովորեցնել այլ անձանց ճանաչել ու ընդունել առանձնահատկություններով երեխաներին: Հանդիպումն իրականացվել է սոցիալական աշխատողի կողմից: Ծնողների կողմից հնչեցին տարբեր հարցեր, որոնց տրվեցին պատասխաններ և մոտեցման առանձնահատկություններ: Հաջորդ ամսվա սեմինարի թեման էր՝ երեխաներին ճանաչելու և նրանց կողմից կամակորության հաղթահարման մեթոդները: Ծնողների հետ քննարկվեց կամակորության դրսևորման հիմնական ձևերը, դրանց պատճառներն ու հնարավոր հետևանքները: Ծնողները կիսվեցին իրենց փորձով, տրվեցին տարբեր հարցեր, որոնց մասնագետը տվեց պատասխաններ ու մոտեցման հնարավոր եղանակներ: Հանդիպումն իրականացվել է ծնողական աջակցման խորհրդատուի կողմից: Մարտ ամսին իրականացված ծնողական հանդիպում սեմինարին մասնակցել է կենտրոն հաճախող հաշմանդամություն ունեցող երեխաների 10 ծնող: Սեմինարի թեման էր՝ երեխաների նկատմամբ խտրական վերաբերմունքը հասարակությունում: Ծնողները հենց սկզբից կիսվեցին իրենց փորձով, ինչպիսի վերաբերմունքի են արժանացել կամ հանդիպել հանրային տարբեր վայրերում և ինչպես են արձագանքել: Այնուհետև մասնագետի կողմից տրվեցին դրանց արձագանքելու մոտեցման ձևեր, ինչպես նաև հետագան շարունակելու և կանխելու նման վերաբերմունքը: Մոտեցման բոլոր խորհուրդները միտված էին կարծրատիպերի հաղթահարմանը և երեխային հանրությունից չմեկուսացնելուն, այլ, ընդհակառակը, ինտեգրելուն: Հանդիպումն իրականացվել է ծնողական աջակցման խորհրդատուի կողմից:

**2.2 Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Ծրագրային բոլոր գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար իրականացվել են համաձայն աշխատանքային պլանի:
Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ծրագրային նախատեսված արդյունքները հետևյալ չափով.

- Սոցիալ-հոգեբանական և վերականգնողական ծառայությունների մատուցում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող երեխաների/միջինում՝ 117 երեխա,
- Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ֆիզիկական, մտավոր և հոգեկան կարողությունների և կյանքի հիմնական հմտությունների (մասնագիտական կողմնորոշում, գեղագիտական դաստիարակություն, անձի զարգացում) զարգացում/խմբակների գործում,
- Շահառուների ծնողների ընդգրկվածությամբ իրականացվող դասընթացներ/ծնողական 3 սեմինարների անցկացում,
- Համագործակցություն շուրջօրյա խնամքի հաստատությունների հետ,

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի աշխատանքների և մատուցվող ծառայությունների մասին տեղեկատվություն է դրվել ԱՋԿ ՀԿ-ին պատկանող Արևածագ սոցիալական էջում: Հոդվածները հասանելի են հետևյալ հղումներով.
https://www.facebook.com/Arevatsag/posts/1060356306133386
https://www.facebook.com/Arevatsag/posts/1073221748180175
https://www.facebook.com/Arevatsag/posts/1081926463976370
https://www.facebook.com/Arevatsag/posts/1094665679369115
https://www.facebook.com/Arevatsag/posts/1102563345246015
https://www.facebook.com/Arevatsag/posts/1114595487376134
https://www.facebook.com/Arevatsag/posts/1120872680081748

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում խնդիրներ չեն առաջացել, որոնք կխոչընդոտեին կենտրոնի ծառայությունների անխափան մատուցմանը: Որոշ դժվարություններ կապված են եղել մեծ թվով երեխաների կարիքների գնահատման գործընթացի հետ, քանի որ հաշվետու ժամանակահատվածը ծրագրի առաջին եռամսյակն էր:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

- Ծառայությունների մատուցում կենտրոնի շահառուներին ըստ հաստատված ժամանակացույցի,
- Արտ թերապիայի և նկարչության խմբակների գործում,
- Նոր շահառուների կարիքների և կարողությունների գնահատում, սոցիալական աջակցման պլանի կազմում, պայմանագրերի կնքում,
- Ծնողների համար 3 սեմինար հանդիպումների կազմակերպում, ամսեկան՝ 1,
- Երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող հաստատությունների հետ հանդիպումների իրականացում,
- ՄՍԾ տարածքային կենտրոնի հետ համատեղ աշխատանքների իրականացում, տունայցեր,
- Մարզպետարանի համապատասխան բաժնի հետ հանդիպման իրականացում վերամիավորված ընտանիքների, խնամակալ և խնամատար ընտանիքների հայտնաբերման և հնարավոր ծառայությունների մատուցման համար:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

Կենտրոնի ծառայությունների մատուցման շրջանակներում ֆիզիոթերապևտի և ծնողական աջակցման խորհրդատուի հաստիքները կենտրոնի գործարկման ընթացքում նախատեսված չեն սույն ծրագրի աշխատանքային պլանով և բյուջեով, սակայն դրանք իրականացվում են «Ամքոր Հայաստան» բարեգործական հիմնադրամի ֆինանսավորմամբ՝ առավել ամբողջականացնելով կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունները մարզի շահառուներին:

Իրականացվել է Արմավիր քաղաքի թիվ 8 և թիվ 3 մանկապարտեզների ընդհանուր թվով 54 ծնողների հետ ծնողական հանդիպումներ, որոնց ժամանակ խոսվել է երեխաների տարիքային զարգացման առանձնահատկությունների մասին՝ շեշտը դնելով հնարավոր խնդրների վաղ հայտնաբերման, դրա կարևորության, անհրաժեշտ քայլերի ձեռնարկման վրա:
Ծնողական այս հանդիպումների իրականացումը նույնպես կատարվում է «Ամքոր Հայաստան» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ:

Digitally signed by ARAKELYAN NAIRA 5114670166
Date: 2025.04.09 13:06:43 AMT